



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերնությամբության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՇԵՐՆՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2022

Դեկտեմբեր


Տեղեկագիրը կազմել է ագրոոդերնությամբության բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերնությամբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դեկտեմբերի օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից մինչև 2-4 աստիճանով, Լոռիում, Տավուշում, Սյունիքում և Արցախում եղել է նորմայի սահամաններում մի փոքր բացասական շեղումով:


Օդի միջին օրական ջերմաստիճաններն առաջին փասնօրյակում բարձր են եղել նորմայից 2-4, Լոռիում, Տավուշում և Սյունիքում՝ ցածր 2-5 աստիճանով, երկրորդ փասնօրյակում՝ նորմայից բարձ 3-5 աստիճանով, երրորդ փասնօրյակում՝ նորմայից բարձր 1-2 աստիճանով, Լոռիում, Տավուշում նույնքան ցածր:



Ամսվա ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են Տավուշում +13...+17°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +6...+8°C, նախալեռնային շրջաններում՝ +10...+12°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +16...+18°C, նախալեռնային շրջաններում՝ +12...+15°C, Շիրակում՝ +6...+10°C, Կոտայքում՝ լեռնային և նախալեռնային շրջաններում՝ +8...+10°C, Գեղարքունիքում՝ +6...+10°C, Լոռիում՝ +13...+15°C, Արմավիրում՝ +10...+11°C, Արարատում՝ +8...+10°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +8...+9°C, նախալեռներում՝ +8...+11°C:

Ամսվա ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 30,31-ին. Տավուշում գրնցվել է -4...-9°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ -10...-12°C, նախալեռնային շրջաններում՝ -4...-6°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ -1...-6°C, նախալեռնային շրջաններում՝ -10...-14°C (Գորիս՝ -6°C), Շիրակում՝ -10...-14°C (Աշոցք՝ -18°C), Կոտայքում լեռնային շրջաններում՝ -9...-14°C, նախալեռնային շրջաններում՝ -4...-6°C, Գեղարքունիքում՝ -10...-14°C, Լոռիում՝ -9...-14°C (Օձուն՝ -7°C), Արմավիրում՝ -8...-9°C, Արարատում՝ -6...-9°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ -15...-16°C, նախալեռներում՝ -4...-7°C:


Տասնօրյակային տեղումներ



Ամսվա ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 6-21մմ (24-63%), Լոռիում՝ 10-21մմ (52-105%), Տավուշում՝ 10-29մմ (43-145%), Արագածոտնում՝ 8-12մմ (20-58%), Գեղարքունիքում՝ 9-14մմ (24-60%), Կոտայքում՝ 5-10մմ (14-21%), Արմավիրում՝ 8-11մմ (44-50%), Արարատում՝ 8-10մմ, (27-56%), Վայոց ձորում՝ 4-23մմ, (15-19%), Սյունիքում՝ 1-16մմ (4-53%):


Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է ամսվա երրորդ տասնօրյակում. լեռնային, առանձին նախալեռնային և հովտային շրջաններում՝ -14...-19°C, Աշոցքում՝ -20°C, մնացած շրջաններում՝ -6...-9°C, տեղ-տեղ՝ -11...-13°C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը




Ամսվա առաջին կեսին ձյան ծածկ առաջացել է շրջանների մեծ մասում, բացառությամբ Արարատյան դաշտի և որոշ նախալեռնային շրջանների: Ձյան առավելագույն քանակը կազմել է 1-21սմ, Արագած բ/լ-ում՝ 34սմ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ձյան ծածկ պահպանվել է միայն Արագած բ/լ-ում կազմել է 32սմ, Պուշկինի լ/բ-ում՝ 5սմ, մնացած շրջաններում ձյան ծածկը բացակայել է:



Աշնանացան ցորենի ձմեռման պայմանները

Ամսվա ընթացքում լեռնային և որոշ նախալեռնային շրջաններում աշնանացան ցորենը գտնվել է ձմեռային հանգստի շրջանում: Առանձին նախալեռնային շրջաններում վեգետացիան դադարել է առաջին, հովտային շրջաններում՝ երկրորդ փաստաբանական փուլերում:



Շրջանների մեծ մասում աշնանացանն անցել է ձմեռման թփակալած, որոշ շրջաններում՝ երրորդ տերևի և հանգուցային արմատների առաջացման փուլերում: Բույսի աճի ու զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող տեղումների քանակը սկսած ցանքից մինչև ամսվա վերջ անբավարար են եղել ցանքի, հատիկի նորմալ աճի և ծլունակության համար, որն էլ բացասական կանրադառնա բերքի քանակի և որակի վրա: Մերձավանում աշնանացան գարու թփակալման հանգուցում (հողի 3սմ շերտում) նվազագույն ջերմաստիճանը գրացվել է -8°C , սակայն այն վրանգավոր չի եղել, քանի որ մշակաբույսը գտնվել է թփակալման փուլում:

Ամսվա վերջին հովտային շրջաններում հողը սառած էր 11-15սմ, լեռնային շրջաններում՝ 21-34սմ խորությամբ:

Դեկտեմբերի վերջին տասնօրյակում առանձին օրեր հանրապետությունում հողի մակերևույթին դիտված բացասական ջերմաստիճանները $-13...-18^{\circ}\text{C}$ (Աշոցք՝ -20°C) և ձյունածածկույթի բացակայությունը վրանգավոր էին աշնանացանի համար:
